

շաբաթիուններ, Թրիլիսի, 1930 (վրացերեն), և. Գրիշաշվիլի, Վրաց շեքապի-  
րականը և Խվան Մալաբելին «Գրական ակնարկներ» գրքում, Թրիլիսի, 1957,  
էջ 329 (վրացերեն):

Յ «Ճիշկարի», 1859, № 5, էջ 5:

Հ «Նիկոլով Բարամազվիլի», Թրիլիսի, 1968, էջ 174 (վրացերեն):

## ՄԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ

Հաղորդում Լալա Օհուազյանի

Շեքսպիրի երկերի, Հատկապես ողբերգությունների հայերեն թարգմանությամբ ըգ-  
րազվել բանասերների ուշադրությանն եմ Հանձնում մինչև հիմա նրանց աշքից վրի-  
պատճեն մի մանրամասնությունների:

Մինչև նոր նախիշեան մեկնելով Փետրոս Աղամյանը, ինչպես Հայտնի է, Շեքսպի-  
րի ողբերգական դիրերից մարմնավորել է մի կերպար՝ Համլետ: Ռուսաստանյան շըր-  
շապայության ընթացքում, որիմն ավելի ուշ խաղացել է Օթելոյի դիրը: Մի քանի  
տարվա բացակայությունից հետո նա վերադառնում է Թիֆլիս, որի բավական ժամա-  
նակ մնում է և ստեղծում է շեքսպիրյան իր երրորդ գուփարօրծոցը՝ կիր արքա:

Հայտնի է, որ Համլետի գերը ողբերգուն կատարել է Սենեքերիմ Արծրունու թարգ-  
մանությամբ, և նմարգելով բեմական որոշ խմբագրության: Հայտնի է նաև, Օթել-  
ոյի դիրը կատարել է Ստեփանոս Սուլիանյանցի թարգմանությամբ:

Իսկ ի՞նչ թարգմանությամբ է խաղացել կիր արքայի գերը:  
Աղամյանի կյանքի ուսումնասիրողները, Հատկապես Ռ. Զարյանը, (տե՛ս «Աղամյան. կյանքը», էջ 292), ըստ երևութիւն հնենքելով՝ Աղամյանի մասին «Համլետի»  
թարգմանչի գրած հուշերի վրա (տե՛ս «Տարազ», 1916, № 4—5), որպես թարգմանչի  
հիշատակում են նույն Սենեքերիմ Արծրունուն: Եվ դա, իհարկե, ճիշտ է, մանավանդ որ  
հաստավում է որիշ աղբյուրներից նույնպիս:

Սարկան թէ «Համլետի», թէ «Օթելոյի» հայերեն թարգմանությունները լույս են  
տեսել, և Աղամյանի բեմական արվեստի ուսումնասիրողները հնարավորություն ունեն  
իրենց ձեռքի տակ ունենալ թարգմանական տեքստը, որով նա բեմ է բարձրացել:

«Օթելոյն» լույս է տեսել 1880-ին, իսկ «Համլետը» 1889-ին, երկուան էլ Թիֆ-  
լիսում: Իսկ «կիր արքան»: «կիր արքան» լույս շի տեսել և նրա մասին մեր ունե-  
ցած պատկերացումը սահմանափակվում է այս մի քանի փոքրիկ հատվածներով, որ  
հիշվում են Սենեքերիմ Արծրունու հուշերում: Այսքան և ոչ ավելի:

Մեր ձեռքն ընկալ «Համլետի» հայերեն թարգմանության 1889-ի հրատարակու-  
թյան ու կազմված մի օրինակ, որտեղ պահպանված էր գրքի շապկի ու միայն «երե-  
սը», այլ նաև «մեջքը»: Եվ առաջ այդտեղ հրատարակիչ Բարսեղ Քամալանը հայտ-  
նում է, թէ ինչ գրքեր են տպագրության պատրաստ, ինչպես օրինակ՝ Նար-Գոսի «Ան-  
նա Սարոյանը», «Դաշնակ» ժողովածուի առաջին հատորը, նույն Արծրունու «Տփիի-  
սեցի ասպետյաններ» երեք արարով դրաման և այս ամենի հետ «տպագրության հա-  
մար պատրաստ են հետեւալ թարգմանությունները Ս. Արծրունու: Եվ հիշված են

Հերմոնավովի «Դիմակահանգեսը» ու Շեքսպիրի «Լիր արքան»։ Սակայն ոչ մեկն է լուս տեսել, ոչ էլ մյուսը թողոր դեպքերում կարևոր ու հետաքրքիրն այն է, որ Արծունին «Համլետի» նման կամեցի է հրատարակել Աղամյանի համար կատարած իր երկու թարգմանությունները ևս օրինք պատրաստ են եղել տապարության համար և ինչ-ինչ պատճառներով լուս շեն տեսել, նշանակում է բոլոր դեպքերում Արծունին իր թարգմանությունը կարգի է բերել, նայել է, վերանայել, մաքրագրել։ Հետևապես պետք է հուսալ, որ մի օր կարող է «Լիր արքայի» (ինչպես նաև «Դիմակահանդեսի») հայերեն թարգմանության ձեռագիրը հայտնվել։

## ԳԱՐԵՒԻԿ ՖԱՆՏԱՍԻԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻՆ

Հրապարակում և առաջարան Բախտիար Հովհակիմյանի

Դառնիկ Հարությունի Ֆնտրլանը (1862—1937) թեև զբաղմունքով վաճառական, բայց հայ հասարակական կանոնամ առավելապես հայտնի է իրու բանասեր, պատմարան և թարգմանիչ։ Նրա գրչին են պատկանում Մաշտոցի, Խորենացու, Կորյունի, Քուչակի և այլ գրողների, ինչպես նաև գրական-քննադատական, լեզվի, ազգագրության, թարգմանության և այլ հարցերի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ։

Ֆնտրլանը որոշ աշխատանք է կատարել նաև թարգմանության բնագավառում։ Նա թարգմանել և հրատարակել է Օմար Խայամի բառլակները։ Հայ իրականության մեջ առաջինը նա է արձագանքել Խարինդրանաթ Թագորի «Պարտիզանի» անգլերեն հրատարակությանը 1913 թվականին և տվել հինգ երգի առաջին հայերեն թարգմանության նմուշը։

Վերջապես, առաջինը Ֆնտրլանն է, որ թարգմանել է Շեքսպիրի «Անտոնիոս և Կլեոպատրա» ողբերգությունը։

«Անտոնիոս և Կլեոպատրա» ողբերգության թարգմանության և հրատարակության մասին պատմող այս նամակները Ֆնտրլանը գրել է Արշակ Չուպանյանին։ Այս նամակները, որ պահպան են ե. Չարենցի անձնագրանության և արքեստի թանգարանում, տպագրում ենք որոշ կրթատումներով, թողնելով «Անտոնիոս և Կլեոպատրայի» հետ կապված հարցերը։

Ֆնտրլանի վաղմեջ ցանկությունն է եղել թարգմանել Շեքսպիրի գործերը։ Նա մըտագրություն է ունեցել թարգմանելու «Համլետը», «Շուտեն և Զուինտը», «Լիր արքան»։ Բայց սկսել և ավարտել է, ըստ երևույթին, միայն «Անտոնիոս և Կլեոպատրան»։ Թարգմանությունն այս գործից սկսելու նախապատվություն տալը պետք է բացատրել երկու հանգամանքով։ Նախ՝ նրա նախասիրությունը պատմության, ոեալ մարդկանց կյանքի ուսումնասիրության նկատմամբ և երկրորդ՝ այստեղ հիշատակված է Հայաստանը։

«Անտոնիոս և Կլեոպատրայի» թարգմանության առթիվ նա մտադրություն է ունեցել նաև ուսումնասիրություն գրելու Շեքսպիրի մասին Գրեշմանի է, արդյոք, մեզ հայտնի չէ։